
**ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՏԱՐԱԾԱԶԱՓԱԿԱՆ ԵՎ
ՀԱՐԹԱԶԱՓԱԿԱՆ ՄԵԿՆԱԿԵՏԵՐԸ**

ԴԱՎԻԹ ԳՅՈՒԼՉԱՏՅԱՆ

Լեզվական նշանը՝ իր հատկություններով, անչափ առաձգական երևույթ է, որի բովանդակությունը ներառում է հնարավոր ամենարևոտագրկուն նշանից մինչև նվազագույն միավորը՝ վերջինիս մեջ առավելագույն նշանի արևերեսման ներուժությամբ: Է. Աթայանի խորքային և մակերեսային ստորոգումների տրամախոսական բնութագրության հանգույն, թե ամենախորքայինը հենց ամենամակերեսայինն է¹, կարող ենք տալ լեզվական նշանի այդօրինակ մի բնութագրություն, որ է՝ նվազագույն լեզվանշանն ընդգրկում է ամենարևոտագրկունը՝ լեզվական հորինվածքն ամբողջությամբ: Մա հուշում է նշանի և նրա պարունակ «գետեղարանի» նշան և ոչ նշան բաղադրիչներն ամփոփող նշանալուրտի, տրամաբանական տարածության հարաբերականություն. այն, ինչ տարածությունն է որոշ հարթությունների, կարող է հարթությունը լինել մի այլ տարածության: Իսկ առավելագույն տարածությունն ամեննին չի սահմանափակվում տվյալ ազգային լեզվով: Կա նաև մարդկային վերացական լեզվի ըմբռնումը, որն ուզենք թե չուզենք համարելու ենք վերացարկված լեզու-նշան, որի հարաբերությամբ հարթություններ են ազգային լեզու-նշանները: Արձանագրենք, ուրեմն, որ լեզվական նշանի տարածաչափական և հարթաչափական ամենից դյուրին բացահայտելի տեսակները մարդկային և ազգային լեզուներն են, որոնք հնարավորության և իրացվածության հարաբերությամբ մեկ նշան համարելով՝ պարտավոր ենք նկատել համամարդկայինի՝ նշանակյալ և ազգային(ներ)ի նշանակիչ լինելու փաստը: Նույն սկզբունքին հետամուտ՝ որևէ դժվարություն չի ներկայացնում արդեն իրական լեզուների նկատմամբ որոշակի ստորակարգություն սահմանելը, ըստ որում, տարբեր մոտեցումներով, ասենք՝ միջլեզվական և ներլեզվական, միջլեզվականի դեպքում՝ ծագումնաբանական կամ տիպաբանական, այս կամ այն լեզվով խոսողների բազմաթվության և սակավաթվության, աշխարհագրական ընդգրկման, գործառական ոլորտների բաշխվածության և այլն, և այլն: Ներլեզվականի դեպքում ևս նշանային խմբավորումն արդարացված կլինի սկսել ամենից հեշտ «տեսանելի» գոյաձևերից: Այս առումով առավել ընդգրկուն նշանը տվյալ ազգային լեզուն է՝ գոյաձևային հարթություններով՝ վերացած գրական, առկա

¹ Տե՛ս Է. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 211-212:

գրական, գրականամերձ խոսակցական, հանրաբարբառային, տարածաբարբառային թևերով: Մրանցից հանրաբարբառայինը ճյուղավորվում է շեղալեզվի (ժարգոն) և ծածկալեզվի (արգո), տարածաբարբառայինը ենթաբարբառների, սրանք էլ խոսվածքների, խոսվածքները՝ ենթախոսվածքների: Այս ստորակարգության եզրային բաղադրիչն անհատի լեզուն է, որ կարող է արտահայտությունը լինել կա՛մ գրական լեզվի, կա՛մ հանրային բարբառի, կա՛մ տարածքային բարբառի ու նրա ճյուղավորումներից որևէ մեկի: Ստորակարգության վերին բաղադրիչները՝ տարածաչափական, ստորին հարթաչափական տիրույթներն են: Ենթաստորակարգության դեպքում միջնանդամը նախորդի հարթությունն է և հաջորդի տարածությունը:

Սա այսպես է, անտարակույս, բոլոր լեզվատեսակների և գոյաձևերի նշակարգի (կողի)² բնույթի պայմանավորվածությամբ: Պարզենք, արդ, այդ բնույթը:

Վերանալով նշակարգի բազմաթիվ բնորոշումների բազմությունից՝ ասենք, որ մեր պատկերացմամբ լեզվական նշակարգը լեզվի համար նույնն է, ինչ ինքնաշխատ համակարգերի ընթացակարգը՝ սկսած գործի գցման պահից մինչև աշխատանքի ավարտը: Լեզվական նշակարգը ողջ լեզվական հորինվածքին բնուստ հատուկ կարգաբերվածությունն է՝ այդ հորինվածքի նպատակին ծառայելիս դրսևորվող բոլոր օրինաչափություններով՝ տրամաբանական կադապարներն ու հասկացությունները հոգեկան պատկերացումների շերտով կայծակնորեն անցկացնելու և խոսողությամբ առարկայական վերաբերությանը հասցնելու իսկությամբ, այդ իսկությունը լեզվական փաստ ազդանշելու և համակարգի հուշադարան փոխանցելու նախորոշվածությամբ, դրսևորվելիս ներհամակարգային օրենքների ու կանոնների զինանոցի համապատասխան արտահայտվածությամբ: Ներհամակարգային առումով նշակարգված են բոլոր օրինաչափությունները՝ արժութայնությունը, համաձայնությունը, բառակազմական, ձևակազմական, վանկակազմական, հնչյունական օրենքները, նաև հնչյունների հաջորդականության օրենքները: Այն, որ հայերենում կարող է լինել [դըժվըժ] հնչյունական հաջորդականություն՝ *դժվժալ*, *դժվժոց*, իսկ [դըվժըտ] ոչ, նույնպես նշակարգվածության արտահայտություն է: Ներհամակարգային դինամիկ ձևի նշակարգվածություն է այն իրողությունը, որ անգլերենը, ռուսերենը և այլ լեզուներ օտար տարրերը վերցնում են պատրաստի ձևով՝ փոխառությամբ, իսկ հայերենը, գերմաներենը և այլ լեզուներ դրանք յուրացնում են թարգմանաբար. կրկնում ենք՝ սա ևս համապատասխան լեզուների նշակարգերի հունով իրացվելիություն է, և զուր է այսօր էլ խորհրդային տարիներից դժգոհության այն մնացուկը մեզանում, թե միջազգային տերմինները պետք չէ թարգմանել, մանա-

² «Կողի» հայերեն համարժեքը՝ «նշակարգ», ստեղծել է Աշոտ Աբրահամյանը (տե՛ս **Ա. Աբրահամյան**, Տեքստի տարբերակները և Ռասելի պարադոքսը // «Վեմ» համահայկական հանդես, 2016, հմ. 4, էջ 125):

վանդ որ «միջազգային տերմին» ասածն էլ կեղծգիտական հասկացություն է: Դինամիկ ձևերից յուրաքանչյուրի առանձնաբար դրսևորվելը լեզուներում հարթաչափական իրացվածություն է, որը տրված է տարածաչափական այն հնարավորությամբ, համաձայն որի՝ լեզուները կարող են ունենալ դինամիկ ձևի թե՛ մեկ, թե՛ մյուս դրսևորումը, այլ կերպ ասած՝ **միջհամակարգային հանդիպադրությամբ է մեկին դառնում ներհամակարգային նշանակչությունը** (նշանակիչ լինելը):

Նախքան ներհամակարգային չափումներին հասնելը վերստին փորձենք պարզել նշակարգի բնույթը իմաստավորելու նրա էությունը: Հասկանալիությանը մերձենալու համար զննենք հաղորդող և ընդունող բնեռների հարաբերությունը, այսինքն՝ պարզենք՝ ինչպե՞ս են հասկանում միմյանց հաղորդակիցները: Լեզվակիր հանրության բոլոր անդամների ենթագիտակցության մեջ ննջած է ամեն կարգի հաղորդելիքի մատուցման նշակարգը, որն աշխուժանում է գիտակցական մակարդակում: Կան արտահայտվելիքի նշանակչային պարունակներ կամ կադապարներ, որոնցից յուրաքանչյուրը այս կամ այն բովանդակությունը կլանելու նշանակյալ ներառելու օժտվածություն ունի: Հաղորդողի հաղորդանյութն ընդունելիս հաղորդակիցը ընկալման նույնական պարունակներ ունի իր գիտակցության մեջ, որոնց մեջ լցվում է հաղորդողից «թափվող» նյութը՝ հասնելով ընկալողի ուղեղին, որտեղ էլ այն «մարսվում» է: Եվ քանի որ յուրաքանչյուր հաղորդող նաև հնարավոր ընկալող է, ապա նա ոչ միայն հաղորդում, այլև սեփական ընկալական պարունակներով լսում-ստուգում է իր իսկ հաղորդածը: Հաղորդողը վերլուծելով համադրում է ասելիքը, ընկալողը համադրելով վերլուծում է համադրվածքը՝ որպես լեզվական համակարգի փաստված նշանային միավոր՝ հե՛նց որպես համակարգ: Հաղորդողը հաղորդանյութն արտածելիս այն վերլուծում է կառույցների, և հաղորդանյութը, հաղորդակիցների ունկերի միջոցով գուգահեռաբար ազդանշվելով դեկավարող գործարանին՝ ուղեղին, սեփական իսկ կառույցներից բաղադրում է համակարգ: Նյութը հաղորդելիս արտածում ենք, ունկնդրելիս՝ մակածում: Մակայն հաղորդողը, ինչպես նշվեց, նաև սեփական խոսքի ունկնդիրն է, ուստի լսելիս միաժամանակ մակածում է ասելիքը: **Հաղորդողը բերանով արտածում է, ունկերով՝ մակածում: Արտածելիս համակարգը վերլուծում ենք կառույցների ու միավորների, մակածելիս միավորներից ու կառույցներից համակարգ ենք կառուցում:** Հարթաչափորեն հաղորդակցության ընթացքում «ընկալողի հարթության մեջ» ունենում ենք միայն մակածություն, «հաղորդողի հարթության մեջ»՝ արտածություն և մակածություն (մակածությունը՝ սեփական հաղորդածն ընկալողի դիրքից): Խստորեն սահմանազօծելու դեպքում հաղորդողից՝ որպես այլ հաղորդակցության ժամանակ գուտ ընկալողի, դուրս թողնելով ընկալունակության պահը՝ կարելի է նույնիսկ հարթաչափական մեկական եղանակային հատկություն վերապահել յուրաքանչյուր հաղորդակցի, այն է՝ հարթաչափորեն հաղորդողի «տիրույթում» արտածությունն է գործում, ընկալողի «տիրույթում»՝ մակածությունը: Տարածաչափորեն հաղորդակցութ-

յունը արտածամակաձական համակցություն է:

Այս ամենի հստակ և ճշգրիտ նշակարգումը կա յուրաքանչյուր լեզվակրի ներսում, որ, ի թիվս այլոց, անկասկած ունի նաև **պատմական պայմանավորվածություն**: Սա հատուկ ենք ընդգծում, որովհետև արդի նշանագիտության մեջ Յ. Լոտմանից սկիզբ առած և լայն տարածում գտած այն մտայնությունը կա, թե լեզուն և նշակարգը մի բանով են տարբերվում՝ պատմությամբ, որը չունի նշակարգը³: Ասենք միանգամից՝ սա նման կլինի նրան, եթե կենսաբանների մտքով անցնի հայտարարել, թե ծագումնաբանական նշակարգը գուրկ է պատմականությունից: «Յուրաքանչյուր հասարակության առաջնային և առավել համատարած նշակարգը իր գերիշխող բնական լեզուն է»⁴, – ասում է Դ. Չանդլերը: Լեզուն հենց մարդկային հաղորդակցության նշակարգն է՝ որպես յուրօրինակ համալեզվական արժույթայնություն, որ թելադրում է իրենով հաղորդելիքի կարգը՝ խստորեն որոշարկված հունով: Լեզուն ժամանակային հայեցակետերով դիտարկելու կարևորությունը, որի սկիզբը դրեց Ֆ. դը Մոսյուրը, բացարձակության հանգեցնել չի կարելի: Բացարձակացման սկիզբը ևս Մոսյուրն ինքը դրեց, երբ լեզվի պատմությունը, ի թիվս այլ գիտակարգերի, համարեց արտաքին լեզվաբանության առարկա⁵: Մինչդեռ կայական կամ համաժամանակյա հայեցակետով ոչ մի կերպ հնարավոր չէ պարզել այն, ինչը, ասենք, հայերենում համարվում է պատմական հոլովում: Որքան էլ պատմական իրողությունները որպես սոսկական փաստ գոյություն ունենան հարաբերականորեն կայուն համակարգում, որքան էլ դրանք կայական դիրքերից հակահամակարգ բնորոշվեն համակարգի ներսում, առանց պատմական հայեցակետի հնարավոր չէ իրողությունների վերհանումը, այլ կերպ՝ բավարար չէ հարթաչափական մեկնակետը: Նշանակում է այստեղ ևս գործ ունենք միջհամակարգային տարածության հետ, միայն թե, ի տարբերություն միջլեզվական միջհամակարգայնության, այս դեպքում տարածաչափական մեկնակետը ներլեզվական միջգոյաձևային է: Եվ հարկ է ընդգծել, որ լեզուն մի շտ է պատմական իրողություն: Պարզապես այն, ինչ համարվում է հարաբերականորեն փակ համակարգ, իր գործառությամբ իսկ գործուն պատմական գոյաձև է՝ ի տարբերություն անցած փուլերի, որոնք ոչ գործուն, ուստի և՛ իրականում բացարձակ կայականության հասած գոյաձևեր են:

Վերստին անդրադառնալով լեզվի և նշակարգի հարաբերությանը՝ կարևոր ենք համարում նշել հետևյալը: Տարածված է, այսպես կոչված, «լեզվի կողավորում» ըմբռնումը: Կողավորել կամ նշակարգել հնարավոր է պայմանականորեն և մասնակիորեն, որն ըստ էության վերանշակարգում է: «Մասնակի» ենք անվանում, որովհետև արդեն գոյություն ունեցող լեզվական փաստի հիման վրա է կատարվում «մարդակերտ» նշակար-

³ Տե՛ս Լոտման Կ. Մ. Семiosфера, СПб., 2004, էջ 15:

⁴ D. Chandler, Semiotics. The Basics. 2nd Edition, 2007, p. 148 (մանրամասն՝ էջք 147-173):

⁵ Տե՛ս Գ. դը Մոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., 2008, էջք 39-43:

գումր: Նշակարգման այդպիսի օրինակներ են ծածկալեզուն, լեզուների յուրացմանը և դրանց համակարգերը բացահայտելուն միտված քերականությունները, լեզվի բուն համակարգին համարժեք կամ նրան մասնակիորեն փոխարինող այլ համակարգերը (Մաշտոցի այբուբենը, Մորզեի այբուբենը, Բրայլի այբուբենը, արհեստական լեզուները, ծրագրավորման լեզուները): Բնական լեզուն նշակարգված է վերուստ. այն հնարավոր է միայն վերծանել: Վերծանել՝ տվյալ դեպքում չի նշանակում միայն բացահայտել, այլ գործադրելով վ բացահայտել, այսինքն՝ նան՝ անընդհատ սերել: Մինչև իսկ վերացարկված մարդկային լեզուն արդեն նշակարգված է որպես հանուր մարդկությանը հատուկ խոսունակություն, որի իրացման փաստն են առանձին լեզուներն ու նրանցով հաղորդակցվողները: Նշակարգվածությունն առկա է լեզվի բոլոր գոյամակարդակներում և միջակարդակային անցումներում: Կարող ենք ասել՝ հնչույթի հնչավորում, որի արտահայտությունը հնչյունն է կամ, ըստ Է. Ադայանի, հնչուրդը⁶. կարող ենք ասել՝ բառույթի բառացում, որի արտահայտությունը խոսքային բառն է և այլն: Սակայն լեզվի վերաբերմամբ չեք կարող ասել՝ «նշակարգելիի նշակարգում՝ նշակարգի արտահայտվածությամբ»: Լեզվական նշակարգը սոսկ արտահայտություն չէ, այլ լեզվում իսկ գոյություն ունեցող օրինաչափական շղթա, որով իրացվում է համապատասխան արտահայտություն, և այդ արտահայտությունն էլ, ինչպես ասվեց, նշակարգի օղակներից մեկն է: Նշակարգով է սահմանված լեզվական համակարգի հարացույցների գոյությունը, նշակարգով էլ կարգված են միջհարացուցային հարաբերությունները: Այն դեպքում, երբ հարթաչափական մեկնակետով նույնակարգ տարբեր հարացուցային անդամների թիվը արտաքին դրսևորմամբ տարբեր է, տարածաչափական մեկնակետը դրանք նույնացնում է՝ ի նպաստ առավել թվով անդամների: Այդպես է գրական արևելախայերենի հոլովների անվանական և դերանվանական հարթություններում, և դա է հիմք եղել՝ մեր ուսումնական ձեռնարկում հետևելու Է. Ադայանի օրինակին՝ գրական արևելախայերենի համար ընդունելով վեց հոլով⁷, որովհետև դա է թելադրում, մեր կարծիքով, մերօրյա լեզվի համակարգի համաչափությունն ու հավասարակշռությունն ապահովող նշակարգը: Նույն նշակարգի թելադրանքով է, որ բառի աճի դեպքում վանկակազմի օրինաչափ փոփոխություն է տեղի ունենում՝ վանկատարրերի անկմամբ կամ փոխանցմամբ՝ վանկատոգորման ու վանկապարպման օրինաչափություններով⁸: Նշակարգի թելադրանքով է, որ զերմաներենի հաստատական նախադասություններում զերական՝ բայ-ստորոցյալը,

⁶ Տե՛ս Է. Ադայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջք 235-240:

⁷ Տե՛ս Է. Ադայան, Ժամանակակից խայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջք 217-220, Դ. Գյուլգասոյան, Գրական արևելախայերենի քերականության հիմունքներ, Եր., 2016, էջք 48-53:

⁸ Վանկապարպման և վանկատոգորման մասին տե՛ս տողերիս հեղինակի հոդվածը (Դ. Գյուլգասոյան, Վանկակազմի լեզվանշանային բնութագիրը // Արդի բանասիրության հիմնախնդիրները, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Մանուկ Աբեղյանի ծննդյան 150-ամյակին), Եր., 2015, էջք 83-90):

շարադաստրեն միշտ երկրորդ անդամն է՝ անկախ այն բանից՝ ի՛նչ անդամ է նախորդում նրան: Գերմաներենի նշակարգի թելադրանքով է, որ բարդ տարադասական նախադասություններում անջատվող նախածանցը, զատվելով արմատից, հայտնվում է հետադաս դիրքում գտնվող ստորադաս նախադասության վերջում և այլն, և այլն:

Գոյամակարդակներից հետո արժե՛ նշակարգման բնույթը պարզել նաև լեզվի կառուցվածքի ստորակարգային մակարդակներում: Վերն ասվեց, որ բնական լեզվի նշակարգման հնարավորությունը վեր է մահկանացուներիս կարողությունից, և դրան հնարավոր է մոտենալ մասնակիորեն: Կարծում ենք՝ հիշատակված մասնակիության արտահայտությունն անհրաժեշտ է նշակարգի սերման ու վերստին սերման համար, այլ կերպ ասած՝ **նշակարգի ինքնապահպանության** համար: Նշակարգի գործունեությունը սերմամբ է պայմանավորված: Եթե լեզվակիրներն օժտված չլինեն ստեղծագործ ունակությամբ, նշակարգը պարզապես կդադարի գործելուց, որովհետև **նշակարգի սերումը հենց լեզվական նշանի կարգասերում է** կամ, ասենք միանգամից, **նշանասերում**: Հայերենատիպի լեզուներում կառուցվածքային մակարդակներից լեզվակիրներին, առանց համակարգը խախտելու, նշանասերման հնարավորություն է տրված բառակազմական, շարակազմական, ասացակազմական և վերասացակազմական տիրույթներում: Նշակարգի ընձեռած հնարավորությամբ ու թելադրանքով նոր բառակերտումները, անսովոր և հատկապես գեղարվեստական արժեք ունեցող շարակերտումներն ու բառակցությունները, շարադասական նպատակային տարտղումները նշանասերման վառ վկայություններն են: Մակայն պարտ է նկատել, որ մինչև վերասացական (տեքստային) մակարդակ չկա որևէ արտասովոր բան, որ տրված չլինի համակարգայնորեն: Մինչև իսկ անսովոր բառակազմությունները, եթե չեն հակասում նշակարգի կադապարային բնույթին, ինչպես նաև նախադասությունների կազմումը անդամների անսպասելի տեղաշարժերով, կանոնարկված, հետևաբար և նշակարգված են համակարգորեն: Բառի հնարավոր կադապարներից դուրս՝ նոր բառ և նախադասության հնարավոր կադապարներից դուրս նախադասություն կազմել չենք կարող: Այլ է վերասույթի դեպքում: Աշոտ Աբրահամյանի նախանձելի ձևակերպմամբ՝ «տեքստային տարածության հորիզոնները»⁹ լիուլի տալիս են նշակարգի սերման անսահմանափակ հնարավորություն: Մա լեզվի իրացման ազատության տիրույթն է, կամ լեզուն ազատորեն իրացնելու անհատի մենաշնորհի տիրույթն է, և որքան շնորհաշատ է անհատը, այնքան մեծ է նրա՝ նշանասերմամբ առնվազն զարմացնելու հնարավորությունը: Ի դեպ, լեզվական կառուցվածքի վերասացական մակարդակն ամենից տարողունակ տիրույթն է նաև հետազոտողի համար՝ նշանի տարածաչափական ու հարթաչափական

⁹ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Տեքստային տարածության հորիզոնները // «Վեմ» համահայկական հանդես, 1995, հմ. 3, էջք 119-128:

մեկնակետերն առավելագույնս գործի դնել տալու հնարավորությամբ¹⁰:

Ինչ վերաբերում է բառայինից ցած մակարդակներին, ապա այստեղ անգոր ենք նաև նշանասերման հանդիման, որովհետև զուտ ընդօրինակողի դերում ենք: Այս մակարդակներում ձևակազմական, հնչյունական օրինաչափությունները կայական կերպափոխության են հանգում վերանհատական մղումներով, թեև անհատական հիմքով, բայց պարտադիր կերպով՝ համընդհանուր տարածելիությամբ համաբանության սկզբունքով: Բառայինից ցած մակարդակներում նշանասերման համակարգային փոփոխությունը հանգեցնում է նշակարգի փոփոխության, որ հիմք է դառնում լեզվական նոր համակարգի գոյավորման: Նկատել է պետք, սակայն, որ նշակարգի փոփոխությունը թեև «տեսանելի» է դառնում ստորին մակարդակների զանգվածային փոփոխությունից հետո, սկիզբը, այնուամենայնիվ, ազդանշված է լինում վերին մակարդակների նշանասերման աշխուժությամբ: Բավական է հիշել գրաբարյան գոյաձևի ձևակազմական համակարգը՝ համոզվելու համար, որ ածականական, դերանվանական ու թվականական հոլովման հարացույցների համակարգված վերացումը վերին մակարդակներով պայմանավորված որոշիչ-որոշյալ կառույցի շարադասական փոփոխության, որոշիչ՝ նախադաս դիրքում կայունության հասնելու հետևանք է: Նշակարգն է փոխվել, և այսօր գրաբարի ու մերօրյա հայերենի միանգամայն տարբեր նշակարգերի ենթակա գոյաձևեր ունենք: Ավելին. երբեմնի միասնական նշակարգը «ճեղքվածք է տվել»՝ միջին հայերենի միջնորդությամբ առաջ բերելով բազմաթիվ բարբառներ և գրական լեզվի արևելյան ու արևմտյան տարբերակներ: Գալով ստորին մակարդակների փոփոխություններն առավել հեշտ որսալու իրողությանը՝ պետք է ենթադրել, որ այդ մակարդակների միավորներն առավել զգայուն են նշակարգի նկատմամբ: Վերին մակարդակների միավորներն առավելագույն տեղաշարժերով իսկ ներմակարդակային «ցնցումներ» չեն առաջացնում: Նախադասության կառուցվածքը գլխավոր ու երկրորդական անդամներով, տեքստակազմության սկզբունքները նույնարժեք են մնում թե՛ գրաբարի, թե՛ արդի հայերենի համար: Թերևս կարելի լինի եզրակացնել, որ ձևակազմականից վեր միավորները, մինչև իսկ նշակարգային փոփոխության մղելով լեզուն, պահպանում են ներմակարդակային կայունությունը. ո՞վ գիտե, գուցե այստեղ ևս գործում է լեզվի արտալեզվական պայմանավորվածությունը՝ սեփական «անկախությունը» պահպանելու համար անկայունության մղելով ստորադաս միավորների նշակարգը...

Այսպիսով՝ լեզվական նշանը, ի թիվս այլ չափումների, չափելի է նաև տարածության և հարթության մեկնակետերով: Լեզվական նշանին՝ ներառյալ ողջ լեզվական համակարգը, չափումների այդ հնարավորությունը ևս տրված է նշակարգորեն: Չափումների նշված մեկնակետերը հնարավոր է գործի դնել համամարդկային լեզվից՝ որպես

¹⁰ Այդ հնարավորության սերմերը ևս արդեն ցանել է Աշոտ Աբրահամյանը (տե՛ս Ա. Աբրահամյան, Տեքստի տարբերակները և Ռասելի պարադոքսը, էջ 128):

մարդկային բանականության ընդհանրական ոգու արտահայտության, մինչև անհատի լեզու, մինչև ազգային լեզվական համակարգերի նվազագույն միավորներ ու հարաբերություններ: Եթե ազգային լեզվի նշանի տարածական և հարթութենական հարաչափերը թույլատրված են նշակարգորեն, ապա այդ նշակարգը բխումն է ազգային ոգու և գործում է նրա նախանշվածության թելադրանքով: Մա արդեն մենք չենք ասում, այլ ասել է Վ. ֆոն Հումբոլդտը¹¹, որի հիշատակումն այստեղ պայմանավորված էր մեր իսկ շարադրանքի արդյունքով նրա դիալեկտիկային հանգելու ներքին պատրաստականությամբ:

Բանալի բառեր – *նշան, նշանոլորտ, նշակարգ, նշակարգի սերում, նշանի կարգասերում, նշանասերում, լեզվական գոյամակարդակներ, նշանային գոյակերպեր, ժամանակային հայեցակետեր*

ДАВИД ГЮЛЬЗАТЯН – *Стереометрическая и планиметрическая интерпретации языкового знака.* – Существование семиосферы, включающей компоненты знака и не-знака, уравнивается относительностью логического пространства: то, что является пространством некоторых плоскостей, в свою очередь может стать плоскостью другого пространства. Пространственные и плоскостные параметры лингвистического знака присущи всем языковым типам, системам, их онтологическим и структурным уровням и переходам между этими уровнями. Стереометрические и планиметрические интерпретации выявляются с помощью языкового кода. Для языка это то же, что для автоматических систем их процедуры, начиная с момента запуска до завершения работы. Языковой код является для всей языковой композиции изначально присущей ей организованностью, включающей все закономерности, необходимые для реализации интенции данной композиции.

Ключевые слова: *знак, семиосфера, код, семиозис, онтические уровни языка, онтические виды знака, временные аспекты*

DAVID GYULZATYAN – *Stereometric and Planimetric Interpretations of Language Sign.* – The existence of the semiosphere which includes the sign and non-sign components is balanced by the relativity of logical space; whatever is the space of some planes, in turn, can become the plane of another space. The spatial and planar parameters of a linguistic sign are inherent in all linguistic types, systems, their ontological and structural levels, and transitions between these levels. Stereometric and planimetric interpretations are identified by using the language code. The latter for the language is the same as for automatic systems, their procedures, from the moment of launch to completion. The language code is an organization which is inherent in the entire language composition, which includes all the patterns necessary to realize the intentions of the given composition.

Key words: *sign, semiosphere, code, semiosis, ontic levels of language, ontic aspects of sign, time aspects*

¹¹ Տե՛ս **В. фон Гумбольдт**, Избранные труды по языкознанию, М., 1984, էջը 53-60: